# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 33-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 1-ԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածների պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի նորընտիր ավագանու 1-ին նիստի օրակարգը.

1.Համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին.

2.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին.

3.Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերի սահմանման մասին.

4.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին.

5.Ալափարսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

6.«Ալափարս գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

7.«Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

8.Ալափարսի համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու մասին:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 34-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 23-Ն որոշումը:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 35-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քանակական կազմում ընդգրկել համայնքի ավագանու 3 անդամի:

2.Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկել համայնքի ավագանու անդամներ Գայանե Համբարձումի Գրիգորյանին, Վահե Թադևոսի Անդրիասյանին և Տիգրան Աշոտի Գևորգյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» N 24-Ա որոշումը:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 36-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 37-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 300 000 դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին» N 26-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 38-Ա

## ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Ալափարսի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 27-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Ալափարսի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 38-Ա որոշման

## ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 15:
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 300000 | 300000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 167000 | 167000 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 167000 | 167000 |
| 4 | | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 155000 | 155000 |
| 5 | | Գլխավոր մասնագետ-գյուղատնտես | Համայնքային ծառայության | 2.3-2 | 1 | 155000 | 155000 |
| 6 | | Առաջատար մասնագետ-գանձապահ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 106000 | 106000 |
| 7 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 100000 | 100000 |
| 8 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-2 | 1 | 100000 | 100000 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ալափարսի համայնքապետարանի աշխատակազմ | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 78000 | 78000 |
| 10 | | Գերեզմանատան հսկիչ | Քաղաքացիական աշխատանք | - | 1 | 78000 | 78000 |
| 11 | | Ծառայողական ավտոմեքենայի վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| 12 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| 13 | | Բեռնատար ավտոմեքենայի վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| 14 | | Սպասարկող բանվոր | Տեխնիկական սպասարկման | - | 2 | 78000 | 156000 |
| | Ընդամենը | | | | 15 | | 1796000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077,257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 39-Ա

## «ԱԼԱՓԱՐՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Ալափարս գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 29-ի «Ալափարս գյուղի մանակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 28-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Ալափարսի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 39-Ա որոշման

# «ԱԼԱՓԱՐՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 16:
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/h | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | «Ալափարս գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | Տնօրեն | - | - | 1 | 100000 | 100000 |
| 2 | | Դաստիարակ | - | - | 2 | 90000 | 180000 |
| 3 | | Երաժշտության ղեկավար | - | - | 0.5 | 90000 | 45000 |
| 4 | | Պարուսույց | - | - | 0.25 | 90000 | 22500 |
| 5 | | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ | - | - | 0.25 | 90000 | 22500 |
| 6 | | Տնտեսական մասի վարիչ | - | - | 0.5 | 78000 | 39000 |
| 7 | | Օժանդակ բանվոր | Տեխնիկական սպասարկման | - | 0.5 | 78000 | 39000 |
| 8 | | Դաստիարակի օգնական | - | - | 2 | 78000 | 156000 |
| 9 | | Հաշվապահ | - | - | 0.5 | 78000 | 39000 |
| 10 | | Գործավար | - | - | 0.5 | 78000 | 39000 |
| 11 | | Խոհարար | - | - | 1 | 78000 | 78000 |
| 12 | | Լվացարար | Տեխնիկական սպասարկման | - | 0.75 | 78000 | 58500 |
| 13 | | Դռնապահ | Տեխնիկական սպասարկման | - | 0.25 | 78000 | 19500 |
| 14 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| | Ընդամենը | | | | 11 | | 916000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 40-Ա

## «ԱԼԱՓԱՐՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Ալափարսի համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 13-ի «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 10-Ա որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված
Ալափարսի համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 2-ի
N 40-Ա որոշման

«ԱԼԱՓԱՐՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 7:
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն | Տնօրեն | - | - | 1 | 80000 | 80000 |
| 2 | | Հաշվապահ | - | - | 0.5 | 78000 | 39000 |
| 3 | | Գրադարանավար | - | - | 1 | 78000 | 78000 |
| 4 | | Պարի խմբի ղեկավար | - | - | 1 | 78000 | 78000 |
| 5 | | Սպորտային խմբի ղեկավար | - | - | 1 | 78000 | 78000 |
| 6 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| 7 | | Բակապահ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 78000 | 78000 |
| | Ընդամենը | | | | 6.5 | | 509000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2016 թվականի N 41-Ն

## ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, «Հայաստան» համահայկական հիմնադրամին նվիրատվություն կատարելու, համայնքի գյուղատնտեսական նշանակություն հողամասերի վրա մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումը ֆինանսավորելու և համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի սպասարկման նպատակով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ալափարսի համայնքի 2016 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) պահուստային ֆոնդից կատարել հատկացումներ՝

1)բյուջեի 01-6-1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ(Այլ դասերին չպատկանող)» գործառական դասակարգման 4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» սինթետիկ հաշվին՝ 40 000 դրամ.

2)բյուջեի 04-2-1 «Գյուղատնտեսություն» գործառական դասակարգման 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» սինթետիկ հաշվին՝ 120 000 դրամ.

3)բյուջեի 06-4-1 «Փողոցների լուսավորում» գործառական դասակարգման 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվին՝ 80 000 դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ(6)** **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆ
ՎԱՀԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ